ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE8D-CFA9-4398-82C8 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ **ԵԴ2/2469/02/26**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահությամբ դատավոր Աննա Շիլաջյանի

2026 թվականի մարտի 20-ին քաղաք Երևան

դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի «ԷՖԻԿԱՉՈ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքի՝ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊ ընկերության և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊ ընկերության կոնսորցիումին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը

անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

«ԷՖԻԿԱՉՈ» ՍՊ ընկերության ներկայացուցչը հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքի՝ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊ ընկերության և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊ ընկերության կոնսորցիումին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցվորի ներկայացուցիչը էլեկտրոնային դատավարության համակարգի միջոցով (այսուհետ՝ Համակարգ) 05.03.2026 թվականին, ժամը 18:35-ին ստեղծվել է (ներկայացրել է) հայցադիմում, որը 06.03.2026 թվականին մակագրվել է դատավորին, իսկ Համակարգում դատավորին և նրա աշխատակազմին հասանելի է դարձել նույն օրը ժամը 21:30-ին:

Դատարանի 12.03.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանողից պահանջվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները և դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 23*.04.2026 թվականին*՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Հայցվորի ներկայացուցիչը 17.03.2026 թվականին միջնորդել է հայցի հիմք և առարկան փոփոխել:

Միջնորդությամբ վերջինս մասնավորապես հայտնել է.

« Ձեր վարույթում է քննվում թիվ ԵԴ2/2469/02/26 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ «Էֆիկաչո» ՍՊԸ-ն ընդդեմ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի՝ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ստորև ներկայացվում է հայցի հիմքը և առարկան փոփոխելու/լրացնելու վերաբերյալ միջնորդություն

Ինչպես հայտնել ենք ներկայացված հայցադիմումով, ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով, ի դեմս այլ Ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև Հայցվորը՝ «Էֆիկաչո» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Հայցվոր)՝ ներկայանալով «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ի հետ որպես կոնսորցիում:

Դատարանը թիվ ԵԴ2/12064/02/25 քաղաքացիական գործով 2025թ. դեկտեմբերի 16- ին ընդունված և օրինական ուժի մեջ մտած վճռով որոշել է. «Անվավեր ճանաչել Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.10.2025թ նիստի թիվ 3 արձանագրությամբ «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժելու մասին որոշումը»:

Դատարանի թիվ ԵԴ2/12064/02/25 քաղաքացիական գործով 2025թ. դեկտեմբերի 16- ին կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա «Էֆիկաչո» ՍՊԸ-ն և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ն (կոնսորցիում) Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2026թ. նիստի թիվ 7 արձանագրությամբ ճանաչվել են ընտրված մասնակից՝ 1, 10 և 11 չափաբաժիններով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նույն թիվ 7 արձանագրությամբ կայացվել է որոշում սահմանել անգործության ժամկետ, այնուհետև վերջիններիս հետ կնքել պայմանագիր:

Սահմանված ժամկետում «Էֆիկաչո» ՍՊԸ-ն և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ն ներկայացրել են «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 20.02.2026թ. տրամադրված թիվ Ե-05/26/0007 որակավորման ապահովման բանկային երաշխիքը և թիվ Ե-05/26/0008 պայմանագրի ապահովման բանկային երաշխիքը: Նշված երաշխիքների 5-րդ կետի համաձայն՝ երաշխիքները ուժի մեջ են մինչև 24.07.2027թ. ներառյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության (հրապարակվել է 25.02.2026թ.) 1.1 կետի համաձայն. «Ընդունել ի գիտություն, որ ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հաղթող ընտրված մասնակից է ճանաչվել՝ չափաբաժին 1,10,11-ում «Էֆիկաչո» ՍՊԸ-ն և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ն կոնսորցիումը: Մասնակցին սահմանված կարգով ծանուցվել է ՀՀԱՄԱՇՏԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով պայմանգրրի նախագիծը, ինչպես նաև առաջարկվել է ծանուցումը ստանալու օրվանից /06.02.2026թ./ հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սահմանված չափով որակավորման և պայմանագրի ապահովումը: «Էֆիկաչո» ՍՊԸ-ն և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ն ներկայացրել են վերը նշված ապահովումները, որտեղ որակավորման ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը /աշխատանքի կատարման ժամկետը՝ 60 օր/ պատվիրատուի կողմից ամբողջական ընդունելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ, իսկ պայմանագրի ապահովումը՝ առնվազն մինչը կնքվելիք պայմանագրով սահմանված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվա հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ, ինչպես նաև 365 օր երաշխիքային ժամկետ: Սակայն «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված

ապահովումներում խախտվել է վերը նշված ժամկետը: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթներով՝ ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Նշված որոշման հիման վրա Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանը 06.03.2026թ. կայացրել է թիվ 564-Ա որոշումը՝ «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ (այսուհետ նաև՝ Որոշում, կցվում է):

Վերոհիշյալ որոշման համաձայն. «Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6- րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Նշված Որոշման իրավական հիմքում նշված է. «սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը»:

Վերոհիշյալ որոշումը www.gnumner.am կայքում հրապարակվել է 11.03.2026թ.:

(...)

Գտնում ենք, որ Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանի 06.03.2026թ թիվ 564-Ա որոշումը՝ «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենդրության պահանջներին հետևյալ հիմնավորմամբ.

1. Նախ, ինչպես նշել ենք սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումով, իրավաչափ չէ «Էֆիկաչո» ՍՊԸ-ին և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելուց գրկելը և համապատասխանաբար, դրա հետևանքով վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը:

Մասնավորապես, Դատարանին հայտնել ենք (ներկայացվում է հակիրճ), որ պայմանագիրը կնքելու փուլում «Էֆիկաչո» ՍՊԸ-ի և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է վավեր պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքներ: Վերոհիշյալ փաստը՝ երաշխիքները ներկայացնելը, հաստատված է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով, որի համաձայն. «.... «Էֆիկաչո» ՍՊԸ-ն և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ն ներկայացրել են վերը նշված ապահովումները):

Դատարանին կրկին խնդրում ենք նկատի ունենալ, որ ՍՊԸ-ները զրկվել են պայմանագիր կնքելու իրավունքից, քանի որ ըստ գնահատող հանձնաժողովի՝ Ընկերությունների կողմից ներկայացված «ՀԱՅԷԿՈՆՈԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 20.02.2026թ. տրամադրված թիվ Ե-05/26/0007 որակավորման ապահովման

բանկային երաշխիքի և թիվ Ե-05/26/0008 պայմանագրի ապահովման բանկային երաշխիքի (ուժի մեջ են մինչև 24.07.2027թ. ներառյալ) վավերականության ժամկետները իբրև թե պակաս են պահանջված ժամկետից (թե ինչքան է կազմում ժամկետի խախտումը, մնում է միայն ենթադրել, քանի որ գնահատող հանձնաժողովը խախտելով ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված որոշակիության սկզբունքը, հստակ չի նշել, թե ժամկետի ինչ խախտում է թույլ տրված):

Նման պայմաններում դատարանին ներկայացված հայցադիմումով հիմնավորել ենք, որ «Էֆիկաչո» ՍՊԸ-ին և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35- րդ և 36-րդ հոդվածների հիման վրա պայմանագիր կնքլու իրավունքից զրկելը իրավաչափ չէ, քանի որ բացակայել է Օրենքի 36-րդ հոդվածով նախատեսված հիմքը, այն է՝ պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելը:

Համապատասխանաբար, դրա հետևանքով իրավաչափ չէ նաև Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանի 06.03.2026թ թիվ 564-Ա որոշումը՝ «Էֆիկաչո» ՍՊԸև «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված ցուցակը, այդ թվում՝ ռուսերեն, վարում և հրապարակում է լիազորված մարմինը: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ և իպերատիվ պահանջում է, որպեսզի պատվիրատուի ղեկավարը կայացնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում:

Ինչպես արդեն նշել ենք, «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանի 06.03.2026թ. թիվ 564-Ա որոշումը ունի հետևյալ բոովանդակությունը.

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումերի գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Նշված Որոշման իրավական հիմքում նշված է. «սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը»:

ա) Նախ, Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ որպես որոշման իրավական հիմք մատնանշված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ:

Այս կապակցությամբ Դատարանի ուշադրությունն ենք հրավիրում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա։

(...)

Այսպիսով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը նախատեսում է 2 տեսակի իրարից միանգամայն տարբերվող իրավախախտ վարքագիծ, որոնք հանգեցնում են մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, այն է՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է նման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը։

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ վիճարկվող ակտով ընդհանրապես չի հստակեցվել, թե Հայցվորը «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսում խախտումներից որն է թույլ տվել։

Այսպիսով, վիճարկվող որոշումից հստակ չի երևում, թե կիրառված սանկցիայի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նկարագրված երկու դիսպոզիցիաներից, որի խախտման արդյունքով է վրա հասել սույն վեճի առարկա անբարենպաստ հետևանքը։

Վերոհիշյալը իր հերթին հանգեցնում է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված որոշակիության սկզբունքի խախտմանը, որն էլ իր հերթին հանգեցնում է որոշման ոչ պատճառաբանված լինելուն։

(...)

Վերոգրյալ նախադեպային դիրքորոշումների համադրումից բխում է, որ իրավական պետությունում իրավունքի գերակայության բաղկացուցիչ տարրն է հանդիսանում իրավական որոշակիության ելակետային սկզբունքը, որը, ի թիվս այլնի, ենթադրում է, որ ներպետական իրավունքի համակարգում անձի իրավունքներին միջամտությունը պետք է լինի բավականաչափ կանխատեսելի և հնարավորություն ընձեռի անձին հասկանալու և ընկալելու իր նկատմամբ կիրառված իրավական հետևանքների ծագման աղբյուրը, իր իրավական կարգավիճակին միջամտության հիմքերը, որպիսի որոշակիության ապահովումն էլ իր հերթին հնարավորություն է ընձեռում անձին իրացնելու միջամտությունից պաշտպանվելու կապակցությամբ օրենսդրորեն սահմանված գործիքակազմերը։

բ) Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ վիճարկվող որոշումում բացակայում են գործի փաստական և իրավական հիմքերը և եզրահանգումը։

Վիճարկվող Որոշմամբ ընդամենը նշվել է հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ հիմք ընդունելով ներքոհիշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Նշված Որոշման իրավական հիմքում նշված է. «սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և/կամ որակավորման ապահովման գումարը»:

Նշված Որոշումից տպավորություն է ստեղծվում, որ մասնակցի իրավախախտ վարքագիծը, կարծես թե, սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի չվճարելն է, մինչդեռ ակնհայտ է, որ վերոհիշյալը չի կարող հանդիսանալ իրավախախտ վարքագիծ, որի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ նախատեսվում է պատասխանատվություն:

Որպեսզի վիճարկվող որոշումը լիներ պատճառաբանված, առնվազն անհրաժեշտ էր, որպեսզի այն պարունակեր տեղեկատվություն մասնակցի կողմից դրևորած ոչ պատշաճ վարքագծի մասին, այսինքն դրանում հստակ պետք է նշվեր մասնակցի կողմից դրևորած ոչ իրավաչափ վարքագիծը, կոնկրետ այն վարքագծի կանոնը, որը խախտվել է մասնակցի կողմից դրևորած վարքագծի արդյունքում և համապատասխանաբար, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշմամբ պետք է հստակ և կոնկրետ նշվեն մասնակցին ցուցակում ներառելու հիմքերը, որոշումը պետք է լիներ բավարար չափով որոշակի, որպեսզի դրա հասցեատերը ի վիճակի լիներ դրսևորելու համապատասխան վարքագիծ: Այսինքն՝գտնում ենք, որ անվավեր պետք է ճանաչվեն այն որոշումները, որոնք առերևույթ զուրկ են որևէ պատճառաբանվածությունից:

Ըստ Էդուարդ Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի՝ “պատճառաբանել” նշանակում է որևէ բանի պատճառը ցույց տալ, բացատրել, հիմնավորել, արդարացնել, որևէ բան արդարացնող պատճառներ՝ հանգամանքներ բերել, իսկ “պատճառաբանություն” նշանակում է այն փաստարկների, տվյալների ամբողջությունը, որոնք բերվում են որևէ բան պատճառաբանելու, հիմնավորելու նպատակով:

Պատճառաբանվածության պահանջի պահպանման իրավաչափ նպատակներից հիմնականները՝ իրավական որոշակիության ապահովելն ու գնման գործընթացին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ ու բավարար պայմաններ ստեղծելը, դրանց պաշտպանությունը երաշխավորելն են, որոնք ստեղծում են իրավունքների պաշտպանություն իրականացնելու հնարավորություն՝ զերծ մնալով իրավական անորոշությունից, որը սահմանափակում է գնման գործընթացին մասնակցող անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունները:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու մասին որոշումը այնպիսի իրավաբանական փաստ է, որը անմիջականորեն միջամտում է տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեությանը, որոշակիորեն սահմանափակելով նրանց շահույթ ստանալու նպատակ հետապնդող գործունեություն իրականացնելու սահմանադրական հնարավորությունը, քանի որ այն անմիջականորեն զրկում է մասնակցին հնարավորությունից երկու տարի ժամկետով մասնակցելու որևէ գնման գործընթացին:

Ուստի օրենսդրորեն կարևորվել է քննարկվող յուրաքանչյուր դեպքում վրա հասնող անբարենպաստ հետևանքի հիմքում ընկած իրավական և փաստական հանգամանքների հստակությունը գնման գործընթացի մասնակցի համար, և միայն նման հստակությունը և վարքագծի կանխատեսելիությունը հնարավորություն կտա վերջիններիս ապահովել իրենց՝ ենթադրյալ խախտված իրավունքի դատական պաշտպանությունը, քանի որ դատական պաշտպանության իրացումը ոչ միայն ենթադրում է դատարան դիմելու ընթացակարգային հնարավորության առկայություն, այլև այդ հնարավորության բովանդակային իրացում, որը հնարավոր է միայն այն դեպքում, երբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող սուբյեկտը իրական հնարավորություն ունենա վիճարկելու համապատասխան որոշման հիմքում որպես պատճառաբանություն նշված փաստական հանգամանքների առկայությունը, հիմնավորվածությունը և հավաստիությունը:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված այն աստիճան, որ հնարավորություն տա ինչպես դրա հասցեատիրոջը, այնպես էլ քաղաքացիական շրջանառության մյուս մասնակիցներին պարզել ու բացահայտել կատարողի կողմից թույլ տրված ենթադրյալ խախտման էությունը, բովանդակությունը և դրա հիմքում դրված հանգամանքները:

Սակայն ուսումնասիրելով որոշումը, պարզ է դառնում, որ այն չի պարունակում փաստական հանգամանք (իրավախախտ վարքագծի նկարագրություն) պատճառաբանություն, պարզ և հասկանալի չէ, թե ինչ իրավախախտման վարքագիծ է դրսևորել ՍՊԸ-ն, արդյոք դա հիմք է վերջինիս Ցուցակում ներառելու համար և ինչ հիմնավորմամբ, մեկնաբանությամբ, քանի որ ինչպես արդեն նշվեց, Որոշմամբ մատնանշված սահմանված ժամկետում հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի չվճարելի, ինքնին, չի հանդիսանում իրավախախտ վարքագիծ:

Մինչդեռ, ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պահանջը՝ որոշման պատճառաբանված լինելու մասով, օրենսդրի կողմից սահմանված պահանջ է, որի պահպանումը պատվիրատուի կողմից պարտադիր պայման է, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ խախտում, սակայն այն բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչում է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական հիմքը»

Նման պայմաններում խախտումը բավականաչափ որոշակի չէ, և պարզ չէ, թե Հայցվորը ինչպես պետք է կանխատեսեր և իր վարքագիծը համապատասխանեցներ ենթադրյալ խախտման կանխարգելմանը:

Այսպիսով, գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառումն իրենից ներկայացնում է մասնակցի նկատմամբ ներազդման միջոց, որն արդյունք է մասնակցի կողմից դրևորած ոչ պատշաճ վարքագծին, ընդ որում, դրանով որոշակի չափով սահմանափակվում է մասնակցի՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք, քանի որ

վերջինս զրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու և դրանից եկամուտ/շահույթ ստանալու հնարավորությունից, ուստի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշման պատճառաբան¬ված լինելու օրենսդրական պահանջի պահպանումը չպետք է կրի ձևական բնույթ, այլ դրանում հստակ պետք է նշվի մասնակցի կողմից դրևորած ոչ իրավաչափ վարքագիծը, կոնկրետ այն վարքագծի կանոնը, որը խախտվել է մասնակցի կողմից դրևորած վարքագծի արդյունքում, և դրանց համադրության արդյունքում պատվիրատուի ղեկավարի ընդունած որոշումը, այսինքն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատվիրատուի ղեկավարի որոշմամբ պետք է հստակ և կոնկրետ նշվեն փաստական հանգամանքները, ցուցակում ներառելու հիմքերը, որոշումը պետք է լինի բավարար չափով որոշակի, որպեսզի որոշման հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Ի թիվս վերոգրյալի՝ հարկ ենք համարում նշել, որ որոշման պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջը ուղղակիորեն բխում է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված իրավական որոշակիության սկզբունքից, ինչը տվյալ դեպքում նույնպես խախտվել է: Մասնավորապես.

(...)

Վերոհիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո հարկ է նշել, որ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքնի պահպանման պարտադիր պահանջներից մեկն էլ վերաբերում է մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու մասին որոշման պատճառաբանված լինելու պահանջը, ինչը բխում է իրավական որոշակիության սկզբունից: Ընդ որում, այդ պահանջը ձևական բնույթ չի կրում, և չի կարող պահպանված համարվել այն դեպքում, երբ թեկուզ պատվիրատուի կողմից վկայակոչվում է ինչ-որ գործողություն, սակայն այն բավականաչափ որոշակի և հստակ չէ, և հնարավորություն չի ընձեռում կատարողի կամ ցանկացած այլ անձի համար հստակ հասկանալու, թե կոնկրետ ո՞ր պարտավորությունն է խախտվել, ի՞նչում է դրսևորվել այդ խախտումը, ո՞րն է դրա փաստական և իրավական հիմքը:

Ըստ այդմ պետք է արձանագրել, որ ուսումնասիրելով վիճարկվող ակտը, պարզ է դառնում, որ այն չի պարունակում պատճառաբանություն, պարզ և հասկանալի չէ, թե նկարագրված գործողությունները ինչ իրավախախտման վարքագիծ են հանդիսանում և ինչ հիմնավորմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

5) անհատական իրավական ակտ՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան ընդունված գրավոր իրավական ակտ, որը սահմանում է վարքագծի կանոն կամ առաջացնում է փաստական հետևանքներ և վերաբերում է միայն դրանում անհատապես նշված անձի կամ անձանց.

Նման պայմաններում գտնում ենք, որ «Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ճահվերդյանը 06.03.2026թ. կայացրել է թիվ 564-Ա որոշումը՝ «Էֆիկաչո»

ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, չի բավարարում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ պատճառաբանված լինելու օրենսդրական պահանջին, այն նաև չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, ինչն ինքնին բավարար է այն ոչ իրավաչափ ճանաչելու համար:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ ներկայումս ձևավորված դատական պրակտիկայի արդյունքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Հայաստանի պատվիրատուների որոշումները դատարանների կողմից անվավեր են ճանաչվում հենց այս՝ պատճառաբանված կամ բավարար պատճառաբանված չլինելու, ինչպես նաև ոչ որոշակի լինելու հանգամանքով պայմանավորված:

(...)

. Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ ևս մեկ կարևոր փաստ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը...:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ նշված ցուցակում ներառվելու համար բավարար չէ մասնակցի խախտում թույլ տալու փաստը (չնայած վիճարկվող որոշման մեջ նշված չէ որևէ իրավախախտման նկարագրություն), որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը իմպերատիվ պահանջում է նաև, որպեսզի մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում վճարած չլինի հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Դատարանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ հայտի ապահովման գումարի վճարման մասին ՍՊԸ-ին ուղարկված ծանուցման մեջ մատնանշված չէ հայտի ապահովման վճարման վերջնաժամկետ, ինչպես դա պահանջում է Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը: Որպես օրինակ կից ներկայացվում է ՀՀ ՊՆ կողմից ուղարկված ծանուցումը՝ ապահովման վճարում կատարելու պահանջի վերաբերյալ, որով հստակ սահմանված է վերջնաժամկետ՝ վճարման պահանջը կատարելու վերաբերյալ (կցվում է):

Գտնում ենք, որ վերոհիշյալ փաստական հանգամանքներում

ՀՀԱՄԱՇՏԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընդունված Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանի 06.03.2026թ. թիվ 564-Ա որոշումը՝ «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, իրավաչափ չէ, քանի որ այն ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի խախտմամբ:

Տվյալ դեպքում Հայցվորի խախտված իրավունքների պաշտպանությունը հնարավոր է ընդունված Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանի 06.03.2026թ. թիվ 564-Ա որոշումը՝ «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ, Դատարանի կողմից անվավեր ճանաչելու եղանակով:

Հաշվի առնելով վերոհիշյալը, սույնով փոփոխում ենք սկզբնապես ներկայացված հայցը և սկզբնական հայցով ներկայացված իրավական և փաստական հիմքերով և սույն միջնորդությամբ լրացված իրավական և փաստական հիմքերով Դատարանին խնդրում եմ որպես հայցադիմումով ներկայացված հայցապահանջ ընդունել հետևյալը.

1. Անվավեր ճանաչել Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը:

2. Անվավեր ճանաչել «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Աշտարակի համայնքի ղեկավար Թ.Ծահվերդյանի 06.03.2026թ. թիվ 564-Ա որոշումը:»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական

նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Հիմք ընդունելով սկզբնապես ներկայացված հայցի փաստական հիմքերը, հայցի առարկան (Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊ ընկերության և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊ ընկերության կոնսորցիումին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին), Դատարանը գտնում է, որ Միջնորդությունը ենթակա է բավարարման, քանի որ դրա արդյունքում չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, իսկ քննվող գործը դուրս չի գալիս առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Միջնորդությունը բավարարել. հայցի հիմքը փոփոխել Միջնորդությամբ նշված հիմքերով, իսկ հայցի առարկան փոփոխել հետևյալ կերպ.

- Անվավեր ճանաչել Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կարիքների համար բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.02.2026թ. նիստի թիվ 8 արձանագրության 1.1 կետով ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին որոշումը:

- Անվավեր ճանաչել «Էֆիկաչո» ՍՊԸ և «ԷՄ քնսթրաքշն» ՍՊԸ կոնսորցիումին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ Աշտարակի համայնքի

ղեկավար Թ.Ճահվերդյանի 06.03.2026թ. թիվ 564-Ա որոշումը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ **Աննա Ճիլաջյան** Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2026.03.20 4:01:53 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am